ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
24 ՄԱՅԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 145

ՆԱՐԵԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Վերին Պտղնի համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 56-Ա որոշումը, համայնքի բնակիչ Նարեկ Գևորգյանի դիմումը՝ **կարգադրում եմ.**

Համայնքի 2021 թվականի բյուջեի «Բարձրագույն կրթություն» բաժին 09, խումբ 4, դաս 1 ծրագրի 4727 հոդվածից 70000 (յոթանասուն հազար) ՀՀ դրամ փոխանցել «Հայաստանի Պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի ուսանող Նարեկ Գևորգյանի տարեկան ուսման վարձի մասնակի չափը վճարելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2021 թ. մայիսի 24
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի 2-րդ փողոց թիվ 48, հեռ. 060 517670,
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 ՄԱՅԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 146

ՄԱՅՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածով, համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 56-Ա որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի բնակիչ Մայրամ Գրիգորյանի դիմումը, միաժամանակ հաշվի առնելով համայնքի սոցիալապես անապահով խավերի սոցիալական պայմաններն ուսումնասիրող հանձնաժողովի եզրակացությունը՝ **որոշում եմ.**

Համայնքի 2021 թվականի բյուջեի այլ նպաստներ ծախսերի 10 խմբի 7-1 ենթախմբի 4729 հոդվածից Վերին Պտղնի համայնքի բնակիչ Մայրամ Գրիգորյանին տալ 40000 (քառասուն հազար) ՀՀ դրամ օգնություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2021 թ. մայիսի 26
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48,հեռ.060517670,էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
26 ՄԱՅԻՍԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ N 147

ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՊԱՍՏԱՌ, ՔԱՐՈԶՉԱԿԱՆ ՏՊԱԳԻՐ ԵՎ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ ՓԱԿՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՎՃԱՐ ՏԵՂԵՐ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Ընտրական օրենսգրքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2021 թվականի մայիսի 13-ի N01/08.1 /03129-2021 գրությունը՝ **որոշում եմ.**

1. 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների համար քարոզչական պաստառ, տպագիր և այլ նյութեր փակցնելու համար առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝ 1-ին փողոց թիվ 36-ի հարևանությամբ՝ 3 քմ, 2-րդ փողոց 1-ին նրբանցք թիվ 2՝ 2 քմ, 3-րդ փողոց թիվ 2՝ 3 քմ:

2. Սույն որոշման կատարման հսկողությունը դրվում է համայնքի ղեկավարի օգնականի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2021 թ. մայիսի 26
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի, 2-րդ փողոց թիվ 48 , Հեռ.060517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 ՄԱՅԻՍԻ 2021ԹՎԱԿԱՆԻ N 148

ԲՈԳԴԱՆ ՊԱՊՈՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջը, ինչպես նաև քաղ. Հակոբ Եղոյանի դիմումը՝ **որոշում եմ**

1.Բոգդան Պապոյանին տալ իրեն պատկանող բնակավայրերի նշանակության տնամերձ հողամասում բնակելի տան,ավտոտնակի և պարսպապատման կառուցման շինարարական աշխատանքները սկսելու թույլտվություն :

2. Հանձնարարել Բոգդան Պապոյանին շինարարական աշխատանքներն իրականացնել համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի համաձայն:

3. Շինարարական աշխատանքները սկսելուց հետո եռօրյա ժամկետում Վերին Պտղնի համայնքի համայնքապետարան ներկայացնել ձև N5 տեղեկանքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Գ. ՊՈՂՈՍՅԱՆ**

2021 թ.մայիսի 27
գ.Վերին Պտղնի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Վերին Պտղնի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Վերին Պտղնի,2-րդ փողոց թիվ 48 , Հեռ.060 517670 էլ.փոստ
verinptghni.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
27 ՄԱՅԻՍԻ2021 ԹՎԱԿԱՆԻ N 149

ԳԱԳԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ և 51-րդ կետերի պահանջներով և Գագիկ Հովսեփյանի դիմումը **որոշում եմ.**

1. Գագիկ Հովսեփյանին սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի Երևան Աբովյան խճուղի թիվ 12 հասցեում գտնվող 07-062-0032-0013 կադաստրային ծածկագրով բնակավայրի նշանակության հասարակական կառուցապատման 0.1058 հա հողամասը և ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի Երևան Աբովյան խճուղի թիվ 14 հասցեում գտնվող 07-062-0032-0012 կադաստրային ծածկագրով բնակավայրի նշանակության հասարակական կառուցապատման 0.1 հա հողամասը միավորել և միավորված անշարժ գույքին տրամադրել նոր հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, Վերին Պտղնի Երևան Աբովյան խճուղի թիվ 14:

2. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻՆ ՊՏՂՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԷՋ *03503712*

20 21թ.մայիս 27
գ.Վերին Պտղնի